**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄ N 2-Ա**
**15 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետով և 82.1-րդ հոդվածի 6-րդ մասով և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալի առաջարկությունը, ***Կապան համայնքի ավագանին որոշում՝ է.***

Հաստատել Կապան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանի հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

**Կողմ ( 25 )՝**

ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ
ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ՍՊԱՐՏԱԿ ՋԱՔԱՐՅԱՆ
ՋՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ
ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ
ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԻՎԱՆՅԱՆ
ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՍՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ____________

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ____________

ՄԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________

ՆԱՐԵԿ ԴԱՎԹՅԱՆ ____________

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ ____________

ԷԴԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ ____________

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ ____________

ԻՎԱՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ____________

ՀԵՐՄԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ____________

ՏԻԳՐԱՆ ԱԹԱՅԱՆ ____________

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ____________ ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

*2022թ. փետրվարի 15*

*ք. Կապան*

Հավելված
Կապան համայնքի ավագանու
2022 թվականի փետրվարի 15-ի
թիվ 2 -Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կապան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքների և ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է 4 714 882 882 ՀՀ դրամ:

2021 թվականին իրականացվել են 2 610 986 234 ՀՀ դրամի աշխատանքներ, այդ թվում՝ 623 700 786 ՀՀ դրամի ծրագրեր և միջոցառումներ, որոնք 2021 թվականի համար նախատեսված չեն եղել, սակայն, ելնելով անհրաժեշտությունից և խնդրի հրատապությունից, իրականացվել են 2021 թվականի ընթացքում: Էլեկտրոնային գործիքով կազմվող ՏԱՊ-երում պահպանման և ընթացիկ ծախսերը չէին արտացոլվում, այդ պատճառով 2021 թվականի ՏԱՊ-ում ներառված են հիմնականում կապիտալ ծրագրերը: 2021 թվականին նախատեսված ծրագրերի մի մասը՝ հատկապես սուբվենցիայի ծրագրերը, մեկնարկել են 2021 թվականին, սակայն 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ չեն ավարտվել, կատարման ժամկետները երկարաձգվել են և տեղափոխվել 2022 թվական:

**2021 թվականին իրականացված (2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ փաստացի ձևակերպված) աշխատանքներն ըստ պարտադիր խնդիրների՝**

**2. Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարում**

Այս բաժնում ներառված է համայնքապետարանի համար գույքի ձեռքբերում, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և փորձաքննություն, հասարակական շենքերի նորոգում և տրանսպորտային միջոցների նվիրատվություն: Ընդամենը նախատեսված էր 278 612 940 ՀՀ դրամի աշխատանք, փաստացի իրականացվել է 165 224 938 ՀՀ դրամի աշխատանք, այդ թվում՝ 102 039 940 ՀՀ դրամի չնախատեսված աշխատանքներ: Հասարակական շենքերի նորոգման ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման ժամկետը երկարաձգվել է, ներկա պահին ընթացքի մեջ են:

**3. Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն**

Այս բաժնում ներառված են համայնքային ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների նորոգման և գույքի ձեռքբերման ծախսերը: Ընդամենը նախատեսված էին 567 200 640 ՀՀ դրամի աշխատանքներ, իրականացվել են 220 736 813 ՀՀ դրամի աշխատանքներ, այդ թվում՝ 18 527 020 ՀՀ դրամի չնախատեսված աշխատանքներ: 2021 թվականին նախատեսված թիվ 9 ՆՈՒՀ-ի հիմնանորոգման և «Թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Դ» մասնաշենքի վերակառուցման ծրագրերը ներկայացվել են 2022 թվականի սուբվենցիայի համար:

**4. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպում՝ երիտասարդության ներգրավմամբ**

Իրականացվել են հասարակական շենքերի նորոգման, մշակույթի կենտրոնի վերանորոգման, Սյունիք գյուղում մարզադաշտի կառուցման և մշակութային հաստատությունների համար գույքի ձեռքբերման՝ 304 439 612 ՀՀ դրամի աշխատանքներ, նախապես պլանավորված են եղել 228 285 288 ՀՀ դրամի աշխատանքներ: 2020 թվականի սուբվենցիայի ծրագրով նախատեսված հասարակական շենքերի նորոգման իրականացման ժամկետը կրկին երկարաձգվել է:

**8. Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանության և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը**

Այս բաժնում ներառված են աղբահանության, սանիտարական մաքրման և կոմունալ ծառայության այլ գործառույթների արդյունավետ իրականացման ծախսերը, կոմունալ տեխնիկայի ձեռքբերման, վերելակների և տանիքների նորոգման, խմելու ջրագծերի նորոգման և կառուցման, ՕԿՋ-ների կառուցման, ջրաբաշխիչների, նստարանների ձեռքբերման և համայնքի բարեկարգմանն ուղղված այլ աշխատանքները: Ընդամենը նախատեսվել էր 718 462 308 ՀՀ դրամի աշխատանքներ, իրականացվել են 590 454 277 ՀՀ դրամի աշխատանքներ, որից 224 674 615 ՀՀ դրամի աշխատանքները նախատեսված չեն եղել 2021 թվականի համար: 2021 թվականի սուբվենցիայի ծրագրերի շրջանակներում իրականացվող բազմաբնակարան շենքերի տանիքների, նկուղային և կիսանկուղային հարկերի, խմելու ջրագծերի նորոգման աշխատանքերն ընթացքի մեջ են և տեղափոխվել են 2022 թվական:

**9. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթկառուցվածքների պահպանություն և շահագործում**

Այս բաժնում ներառված են կանգառների, կամուրջի, ճանապարհների, այդ թվում՝ դիրքեր սպասարկող, բնակավայրերն իրար կապող այլընտրանքային ճանապարհների, մայթերի նորոգման և բարեկարգման, ճանապարհային երթևեկության նշանների տեղադրման ու գծանշման և այլ աշխատանքներ: 2021 թվականին իրականացվել են 1 014 552 039 ՀՀ դրամի նախապես պլանավորված և չնախատեսված աշխատանքներ, ՏԱՊ-ով նախատեսված էր իրականացնել 2 066 916 406 ՀՀ դրամի աշխատանքներ: 2021 թվականի սուբվենցիայի ծրագրով իրականացվող ներհամայնքային ճանապարհների, փողոցների, մայթերի և բակերի հիմնանորոգման ծրագիրի իրականացման ժամկետը երկարաձգվել է:

**10. Աջակցություն պետական պաշտպանության իրականացմանը**

Կապիտալ բնույթի աշխատանք նախատեսված չի եղել, սակայն 2021 թվականին համայնքին տրամադրվել է տնակներ՝ 39 399 600 ՀՀ դրամ արժողությամբ:

**11. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում**

Ներառված է քաղաքացիական պաշտպանության ենթակառուցվածքերի ստեղծման, պաշտպանական նոր բնագծերի կառուցման, շենքերի սեյսմակայունության գնահատման աշխատանքներ և մեքենայի նվիրատվություն: Նախատեսված են եղել 603 000 000 ՀՀ

դրամի աշխատանքներ, իրականացվել են 2 818 533 ՀՀ դրամի աշխատանքներ, այդ թվում՝ 108 533ՀՀ դրամի չնախատեսված աշխատանքներ:

**12. Գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանում**

Իրականացվել են 179 467 432 ՀՀ դրամի աշխատանքներ. գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում, որը նախատեսված չի եղել և Աճանան գյուղի ոռոգման ջրագծի նորոգում, որը ներկա պահին ընթացքի մեջ է: 2021 թվականի համար նախատեսված էր 164 582 400 ՀՀ դրամի աշխատանք:

**13. Համայնքում շրջակա միջավայրի պահպանություն**

Ներառված է ջրավազանի կառուցման, ջրցան մեքենայի նվիրատվության, ծառերի էտման, հատման, կանաչապատման, ծառատունկի իրականացման աշխատանքներ՝ ընդամենը 86 222 900 ՀՀ դրամ, որից իրականացվել են 82 745 760 ՀՀ դրամի աշխատանքներ:

**14. Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող համայնքներում զբոսաշրջության զարգացման խթանում**

Նախատեսված էր 1 000 000 ՀՀ դրամի աշխատանքներ, իրականացվել է 10 547 230 ՀՀ դրամի աշխատանքներ, որից 9 547 230 ՀՀ դրամի աշխատանքները՝ Վահանավանքում տաղավարների տեղադրումը, նախատեսված չեն եղել:

**18. Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանում**

Կառուցվել է 600 000 ՀՀ դրամի թեքահարթակներ:

Իրականացված աշխատանքների ֆինանսական ամփոփաթերթը կցվում է հավելվածին:

**Աշխատակազմի քարտուղար** **Նելլի Շահնազարյան**

*ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ*

| *Հ/Հ* | *Պարտադիր խնդիր* | *2021 թվականին նախատեսվող բյուջեն* | *Փաստացի կատարված* | *Ծանոթություն* |
|---|---|---|---|---|
| **II** | **Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարում** | **278 612 940** | **165 224 938** | |
| 1 | Կապանի համայնքապետարանի համար գույքի ձեռքբերում /առցանց հեռարձակման համար/ | 2 634 000 | 2 468 120 | |
| 2 | Կապանի համայնքապետարանի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում | 23 860 000 | 23 860 000 | ՋՊՄԿ ՓԲԸ |
| 3 | Հասարակական շենքերի նորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում | 2 968 000 | 2 968 000 | |
| 3,1 | Մի շարք օբյեկտների նորոգման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և փորձաքննություն | 0 | 29 324 440 | |
| 4 | Հասարակական շենքերի նորոգում, այդ թվում՝ /2021 թվականի սուբվենցիա/ | 249 150 940 | 33 888 878 | |
| 4,1 | Ծավ բնակավայրի վարչական շենքի նորոգում | 28 000 000 | 33 888 878 | Սուբվենցիային ներկայացված է մեկ ծրագրային հայտով |
| 4,2 | Վարդավանք բնակավայրի ակումբի շենքի նորոգում | 12 000 000 | | |
| 4,3 | Վերին Խոտանան բնակավայրի հանդիսությունների սրահի նորոգում | 12 000 000 | | |
| 4,4 | Չափնի բնակավայրի հանդիսությունների սրահի նորոգում | 20 000 000 | | |
| 4,5 | Դավիթ Բեկ բնակավայրի մշակույթի տան շենքի վերականգնում | 43 140 500 | | |
| 4,7 | Շիկահող բնակավայրի ակումբի շենքի տանիքի նորոգում | 8 094 610 | | |
| 4,8 | Կապանի թիվ 3 երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի ջեռուցման համակարգի կառուցում | 7 698 000 | | |
| 4,9 | Արծվանիկ բնակավայրի բուժկետի նորոգում | 7 500 000 | | |
| 4,10 | Կապան քաղաքի մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց ՀՈԱԿ-ի վերանորոգում | 101 717 830 | | |
| 4,6* | Ներքին Խոտանան բնակավայրի վարչական շենքի կառուցում | 9 000 000 | 0 | *ներկայացվել է 2022 թվականի սուբվենցիոն հայտով /հողատարածքի հետ կապված խնդիրներ/ |
| 5 | Համայնքապետարանի համար գույքի ձեռքբերում | 0 | 3 515 500 | |

| Հ/Հ | Պարտադիր խնդիր | 2021 թվականին նախատեսվող բյուջեն | Փաստացի կատարված | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 6 | Տրանսպորտային միջոցների նվիրատվություն | 0 | 69 200 000 | |
| **III** | **Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն** | **567 200 640** | **220 736 813** | |
| 1 | «Կապանի թիվ 8 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի համար գույքի ձեռքբերում | 15 000 000 | 17 279 210 | Եռակողմ պայմանագիր՝ <<Զարատ Կապան>> ՓԲԸ-ի հետ |
| 1,1 | Դավիթ Բեկ գյուղի մանկապարտեզի համար գույքի ձեռքբերում | 0 | 1 731 000 | |
| 2 | «Կապանի թիվ 9 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում /2021 թվականի սուբվենցիա/ | 200 000 000 | 0 | ներկայացվել է 2022 թվականի սուբվենցիոն հայտով, համալիր փորձաքննության խնդիր |
| 3 | Կապան համայնքի Կապան քաղաքի թիվ 8 և Դավիթ Բեկ բնակավայրի ՆՈՒՀ-երի շենքերի վերանորոգում և Վարդավանք բնակավայրում այլընտրանքային ՆՈՒՀ-ի համար նախատեսվող շենքի նորոգում /2020 թվականի սուբվենցիա/ | 191 652 328 | 168 114 509 | 2021 թվականին ավարտվել են միայն թիվ 8 ՆՈՒՀ-ի նորոգման աշխատանքները |
| 4 | «Կապանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Դ» մասնաշենքի վերակառուցում ՆՈՒՀ կազմակերպելու համար | 154 000 000 | 11 765 440 | |
| 5 | «Ծավի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի նորոգում | 5 158 312 | 4 322 634 | |
| 6 | «Կապանի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն» ՀՈԱԿ-ի համար գույքի ձեռքբերում | 390 000 | 674 000 | |
| 7 | «Կապանի թիվ 3 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի համար գույքի ձեռքբերում | 1 000 000 | 54 000 | |
| 8 | Նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների համար գույքի, շինանյութի ձեռքբերում | 0 | 16 796 020 | |
| **IV** | **Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ** | **228 285 288** | **304 439 612** | |
| 1 | Կապան քաղաքի հասարակական շենքերի (արվեստի թանգարան, Ձորք թաղամասի ակումբ-գրադարան, ՔԿԱԳ գրասենյակ) նորոգում /2020 թվականի սուբվենցիա/ | 228 285 288 | 139 055 127 | 2020 թվականի սուբվենցիա, աշխատանքները չեն ավարտվել |
| 2 | Կապանի քաղաքի <<Մշակույթի կենտրոն>> ՀՈԱԿ-ի շենքի վերակառուցում | 0 | 129 390 576 | ԶՊՄԿ ՓԲԸ |
| 3 | Կապան համայնքի Սյունիք գյուղում մարզադաշտի կառուցում | 0 | 21 648 094 | ԶՊՄԿ ՓԲԸ |

| Հ/Հ | Պարտադիր խնդիր | 2021 թվականին նախատեսվող բյուջեն | Փաստացի կատարված | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 4 | Մշակութային հաստատությունների համար գույքի ձեռքբերում և նվիրատվություն | 0 | 14 345 815 | այդ թվում՝ ԶՊՄԿ ՓԲԸ-ի կողմից տրամադրված |
| VIII | **Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը** | **718 462 308** | **590 454 277** | |
| 1 | Համայնքի գյուղական բնակավայրերում խմելու ջրի նոր ջրագծերի, ՕԿՋ-երի կառուցում, նորոգում, անցկացում, այդ թվում՝ /2021 թվականի սուբվենցիա/ | 261 919 160 | 40 036 300 | |
| 1,1 | Դավիթ Բեկ բնակավայրի խմելու ջրագծերի և ՕԿՋ-ի կառուցում | 70 000 000 | 0 | Նախագծանախահաշվային փաստաթղթերը պատրաստ չլինելու պատճառով սուբվենցիոն ծրագրի ամբողջական հայտով չի ներկայացվել |
| 1,2 | Վարդավանք բնակավայրի խմելու ջրագծի և ՕԿՋ-ի կառուցում | 100 000 000 | 40 036 300 | |
| 1,3 | Սնաքար բնակավայրի խմելու ջրի նոր ջրագծի կառուցում | 91 919 160 | | |
| 1,4 | Չափնի բնակավայրի խմելու ջրագծի կառուցում | 0 | | |
| 2 | Կապան համայնքի Եղվարդ գյուղի խմելու ջրագծի կառուցում և Ագարակ գյուղի ջրագծի վերանորոգում ու ՕԿՋ-ի կառուցում, խմելու ջրի ներքին ցանցի կառուցում /2020 թվականի սուբվենցիա/ | 176 551 110 | 181 616 582 | |
| 2,1 | Կապան համայնքի Ագարակ գյուղի խմելու ջրի մատակարարման ապահովում | 0 | 18 578 695 | |
| 3 | Ձորաստան բնակավայրի կենտրոնական մասի բարեկարգում | 1 000 000 | 0 | |
| 4 | Կապան քաղաքի բազմաբնակարան շենքերի հարթ և լանջավոր տանիքների նորոգում /2020 թվականի սուբվենցիա/ | 73 992 038 | 72 386 840 | |
| 5 | Բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների և նկուղային հարկերի /որպես ապաստարան/ նորոգում /2021 թվականի սուբվենցիա/ | 200 000 000 | 50 682 440 | |
| 6 | Բազմաբնակարան բնակելի շենքերի վերելակների նորոգում | 5 000 000 | 21 057 500 | |

| Հ/Հ | Պարտադիր խնդիր | 2021 թվականին նախատեսվող բյուջեն | Փաստացի կատարված | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 7 | Կապան քաղաքի Մ. Ստեփանյան փողոցի թիվ 8 բ/բ շենքի հարթ տանիքի վերանորոգում | 0 | 4 775 920 | |
| 8 | Աղվանի, Օխտար և Դավիթ Բեկ գյուղերի համար ջրաբաշխիչների ձեռքբերում | 0 | 900 000 | |
| 9 | Նստարանների ձեռքբերում և տեղադրում | 0 | 5 995 000 | |
| 10 | Կոմունալ ծառայություն ՀՈԱԿ-ի համար գույքի ձեռքբերում | 0 | 765 000 | |
| 11 | Դավիթ Բեկ գյուղի համար աղբամանների ձեռքբերում | 0 | 980 000 | |
| 12 | Գյուղերի լուսավորության համակարգի արդիականացման համար LED լուսատուների ձեռքբերում | 0 | 2 050 000 | |
| 13 | Կոմունալ տեխնիկայի ձեռքբերում | 0 | 190 630 000 | Համայնքի բյուջե, Տարածքային զարգացման հիմնադրամ, նվիրատվություն |
| **IX** | **Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում** | **2 066 916 406** | **1 014 552 039** | |
| 1 | Կանգառների վերանորոգում, նոր կանգառների տեղադրում | 3 000 000 | 2 455 117 | |
| 2 | Ճանապարհային երթևեկության նշանների տեղադրում, գծանշում | 300 000 | 1 546 000 | |
| 3 | Կապան համայնքի (Կապան, Գեղանուշ և Արծվանիկ բնակավայրեր) ներհամայնքային ճանապարհների, փողոցների, մայթերի և բակերի հիմնանորոգում /2020 թվականի սուբվենցիա/ | 524 654 056 | 522 255 279 | |
| 4 | Ներհամայնքային ճանապարհներ, փողոցների, մայթերի և բակերի հիմնանորոգում, այդ թվում՝ /2021 թվականի սուբվենցիա/ | 1 265 962 350 | 212 589 980 | |
| 4,1 | Ա. Մանուկյան փողոցի 1-ին նրբանցքի մայթի հիմնանորոգում | 69 340 650 | | |
| 4,2 | Թումանյան փողոցի մայթի հիմնանորոգում | 66 635 000 | | |
| 4,3 | Ռ. Մելիքյան փողոցի մայթի հիմնանորոգում | 30 877 000 | | |
| 4,4 | Ռ. Մինասյան փողոցի մայթի հիմնանորոգում | 49 371 000 | | |
| 4,5 | Շահումյան փողոցի բակերի հիմնանորոգում | 165 390 900 | | |

| Հ/Հ | *Պարտադիր խնդիր* | *2021 թվականին նախատեսվող բյուջեն* | *Փաստացի կատարված* | *Ծանոթություն* |
|---|---|---|---|---|
| 4,6 | Կապան քաղաքի Բաղաբերդ թաղամասի թիվ 14, 15, 16, 18, 19, 20, 21 շենքերի բակերի նորոգման աշխատանքներ | 90 296 700 | 212 589 980 | Սուբվենցիային ներկայացված է մեկ ծրագրային հայտով |
| 4,7 | Կապան քաղաքի Սպանդարյան փողոցի թիվ 5, 8 շենքերի բակերի նորոգման աշխատանքներ | 41 332 900 | | |
| 4,8 | Կապան քաղաքի Մ. Հարությունյան փողոցի (Շահումյան փողոցից մինչև ոստիկանության վարչություն) հատվածի և թիվ 10, 12, 14 շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքներ | 200 940 000 | | |
| 4,9 | Կապան քաղաքի Ձորք թաղամասի հիմնական փողոցը և հարակից թիվ 4, 5, 6, 12, 13 և 15 շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքներ | 287 424 700 | | |
| 4,10 | Կապան քաղաքի Հալիձոր թաղամասի մուտքի և 9, 13, 17, 18, 19 շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքներ | 85 596 100 | | |
| 4,11 | Կապան քաղաքի Ա. Մանուկյան փողոցի թիվ 3, 5 և Թումանյան փողոցի թիվ 16, 18 շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքներ | 49 250 500 | | |
| 4,12 | Գեղանուշ բնակավայր տանող ճանապարհի վերանորոգում/հատված կմ2+700-կմ4+565 | 129 506 900 | | |
| 5 | Աճանան բնակավայրի գյուղամիջյան ճանապարհների բարեկարգում | 3 000 000 | 3 000 000 | |
| 6 | Դավիթ Բեկ բնակավայրի դաշտամիջյան և գյուղամիջյան ճանապարհների բարեկարգում | 6 000 000 | 6 000 000 | |
| 7 | Սևաքար բնակավայրի ներբնակավայրային և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում | 6 000 000 | 6 000 000 | |
| 8 | Կապան - Ագարակ ճանապարհի բարեկարգում /խճապատում/ | 8 000 000 | 8 000 000 | |
| 9 | Կապան համայնքի մարտական դիրքեր սպասարկող՝ գոյություն ունեցող ճանապարհների բարեկարգում, խճապատում | 100 000 000 | 100 000 000 | |
| 10 | Կապան համայնքի մարտական դիրքերի սպասարկման համար նոր ճանապարհների կառուցում, անցկացում | 50 000 000 | 50 000 000 | |
| 11 | Կապան համայնքի բնակավայրերը իրար կապող այլընտրանքային ճանապարհների անցկացում, խճապատում | 100 000 000 | 50 000 000 | |
| 12 | Կապան քաղաքի փողոցների, թաղամասերի փոսային նորոգում | 0 | 7 906 860 | |
| 13 | Կապան քաղաքի բակերի բարեկարգում, ասֆալտապատում | 0 | 10 597 769 | |
| 14 | Կապան քաղաքի Մ. Պապյան փողոցի թիվ 18 բ/բ շենքի բակի բարեկարգում | 0 | 12 038 848 | |

| Հ/Հ | *Պարտադիր խնդիր* | *2021 թվականին նախատեսվող բյուջեն* | *Փաստացի կատարված* | *Ծանոթություն* |
|---|---|---|---|---|
| 15 | Կապան քաղաքի Բաղաբուրջ թաղամասի հուշահամալրի մասնակի վերանորոգում | 0 | 3 379 776 | |
| 16 | Կապան քաղաքի Ա. Մանուկյան, Շահումյան, Հ. Ավետիսյան, Սպանդարյան փողոցների հատման կամուրջի /կենտրոնական/ մայթերի վերանորոգում | 0 | 18 782 410 | |
| **X** | **Պետության պաշտպանության իրականացման աջակցում** | **0** | **39 399 600** | |
| 1 | Տնակների տրամադրում | 0 | 39 399 600 | |
| **XI** | **Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում** | **603 000 000** | **2 818 533** | |
| 1 | Քաղաքացիական պաշտպանության ենթակառուցվածքների ստեղծում՝ 6 բունկերի կառուցում /հնարավոր է սուբվենցիա/ | 400 000 000 | 0 | Ներկայացվել է 2022 թվականի սուբվենցիոն հայտով |
| 2 | Կապան համայնքում պաշտպանական նոր բնագծերի կառուցում | 200 000 000 | 0 | |
| 3 | Սեյսմակայունության գնահատման և բարձրացման նպատակով շենքերում անհրաժեշտ հետազոտությունների կատարում | 3 000 000 | 2 710 000 | |
| 4 | Զիլ 130ԱԲ40 մեքենայի նվիրատվություն | 0 | 108 533 | ԱԻՆ |
| **XII** | **Գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը** | **164 582 400** | **179 467 432** | |
| 1 | Աճանան բնակավայրի ոռոգման համակարգի վերակառուցում /2021 թվականի սուբվենցիա/ | 164 082 400 | 128 117 432 | |
| 2 | Տավրուս բնակավայրի արոտավայրերում անասունների համար ջրի խմոցների տեղադրում | 500 000 | 0 | |
| 3 | Գյուղ տեխնիկայի ձեռքբերում | 0 | 51 350 000 | Համայնքապետարան, տարածքային զարգացման հիմնադրամ |
| **XIII** | ***Համայնքում շրջակա միջավայրի պահպանություն*** | **86 222 900** | **82 745 760** | |
| 1 | Վաչագան գետի հունի վրա ջրավազանի կառուցում | 37 022 900 | 34 145 760 | |
| 2 | Մայթերի հին և ծերացած ծառերի էտում, հատում, նոր ծառատեսակներով փոխարինում, կանաչապատում, պարբերական ծառատունկի իրականացում | 2 000 000 | 2 000 000 | |
| 3 | Ջրցան մեքենայի (ջրցան և խոզանակային համակարգով) նվիրատվություն | 47 200 000 | 46 600 000 | Նվիրատվություն |

| Հ/Հ | *Պարտադիր խնդիր* | *2021 թվականին նախատեսվող բյուջեն* | *Փաստացի կատարված* | *Ծանոթություն* |
|---|---|---|---|---|
| **XIV** | **Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող համայնքներում՝ զբոսաշրջության զարգացման խթանում** | **1 000 000** | **10 547 230** | |
| 1 | Պատմամշակութային հուշարձանների և կոթողների, քանդակների պատշաճ պահպանություն և գեղարվեստական լուսավորում | 1 000 000 | 1 000 000 | |
| 2 | Կապան քաղաքի Վահանավանք թաղամասում միջոցառումների սրահների /տաղավարների/ կառուցում | 0 | 9 547 230 | |
| **XVIII** | **Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանում** | **600 000** | **600 000** | |
| 1 | Թեքահարթակների կառուցում | 600 000 | 600 000 | |
| **Ընդհանուրը** | | **4 714 882 882** | **2 610 986 234** | |

**Աշխատակազմի քարտուղար՝** **Նելլի Շահնազարյան**